



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

№ 2227-Ա/2

«25» նոյեմբերի 2024 թ.

### «ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 2024» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 19-ի N 1791-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի N 3 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

#### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

- Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
- Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջյանին՝
  - ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,
  - կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,
  - ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2024 թվականի դեկտեմբեր ամսից:
- Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՑԱՆԿ  
«ԳԻՏԱԿԱՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՄՐԱՊԵՆՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 2024» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Ծածկագիր	Ղեկավար	Նախագծի վերնագիր	Կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ (հազ. դրամ)
1 24LCG-1C025	Ալեքսանյան Էդուարդ Մնացականի	Բարակ թաղանթների նստեցման և ուսումնասիրման առաջադեմ լաբորատորիա	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	176000.0
2 24LCG-2J001	Ալեքսանյան Միքայել Սերյոժայի	Սենտրալին համակարգերի նախագծում և պատրաստում նաև ակադեմիկոսական նյութերի հիման վրա	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	176000.0
3 24LCG-1D017	Բեգլարյան Հայկ Ալեքսանի	Տարբեր օպտիկական հատկություններով ջերմակայուն սիլիկատային պիգմենտների ստացում և ուսումնասիրություն	ՀՀ ԳԱԱ «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	176000.0
4 24LCG-1E012	Բեյլան Գևորգ Ալեքսանդրի	Ռադիոէլեկտրոնային հետազոտությունների ամրապնդում՝ Հայաստանում ճառագայթման ռիսկի գնահատման և կառավարման համար	ՀՀ ԳԱԱ «Էլեկտրոնոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	153000.0
5 24LCG-1D009	Գալստյան Արմեն Սուրենի	Ազոլների հենքի վրա ասիմետրիկ օրգանոկատալիզ. սինթեզ և ակտիվություն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	176000.0
6 24LCG-2G028	Դավթաբյան Ռուբեն Կոյայի	[68Ga]GaCl3-ի վերջնական արտադրական տեխնոլոգիայի մշակում	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	176000.0
7 24LCG-2J031	Երանոսյան Մկրտիչ Ալեքսանի	Առաջադեմ նյութերի հենքով միկրո/նանո-էլեկտրամեխանիկական համակարգերի (ՄԵՄՅ/ՆԵՄՅ) նախագծում	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	176000.0
8 24LCG-1C021	Հակոբյան Արթուր Աշոտի	Գալակտիկական դինամիկայի ազդեցությունը միջուկի ակտիվության, աստղառաջացման, գերնորների և աստղա-մոլորակային կազմության վրա	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	176000.0
9 24LCG-1C005	Հայրապետյան Դավիթ Բորիսի	Կոլոիդային քվանտային կետերը որպես զարգացող քվանտային տեխնոլոգիաների հիմնական բաղադրիչներ	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	176000.0

10	24LCG-6A016	Հովսեփյան Լևոն Սահակի	Ժամանակակից Ադրբեջանի կիրառական ուսումնասիրություններ	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ	137222.0
11	24LCG-2F027	Ղարազուլյան Հերմինե Սաշայի	Հեղուկ բյուրեղային նանոհամակարգեր առաջադեմ օպտոէլեկտրոնիկայի համար	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	176000.0
12	24LCG-1C015	Մարգարյան Նարեկ Բաբիկի	Մուարե սարքերի մշակում և հետազոտություն տերահերցային քվանտային դետեկտորների համար	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	176000.0
13	24LCG-1E006	Մարգարյան Քրիստինե Սերյոժայի	Կենսաբազմազանությունից դեպի կայունություն. գիտահեն մոտեցում Հայաստանի խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանման և ներուժի բացահայտման համար	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	176000.0
14	24LCG-1D018	Մկրտչյան Աննա Ֆելիքսի	Օպտիկապես ակտիվ նոր α-ամինաթթուների սինթեզ Գլայդերի և Մաննիխի ռեակցիաների կիրառմամբ և դրանց հենքի վրա կառուցված կարճ պեպտիդների ստացում և հետազոտում՝ որպես քիրալային օրգանակատալիզատորներ	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	176000.0
15	24LCG-1C004	Մուղևեցյան Վոսմ Ներսեսի	Ցածր չափայնությամբ էլեկտրոնային և խոռոչային համակարգերի մագնիսական, օպտիկական և տրանսպորտային բնութագրերի կառավարման մեխանիզմների տեսական և հաշվարկային ուսումնասիրություններ	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	153000.0
16	24LCG-1F030	Ներսիսյան Լիլիթ Ռոբերտի	Աղիքային միկրոբիոմի, թելոմերների ֆունկցիայի և բորբոքային գործընթացների փոխկապակցվածությունն ու դերը աղիների բորբոքային հիվանդության մեջ	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	176000.0
17	24LCG-2I019	Պալոյան Անի Միշայի	Արտադրական բնութագրերի բարելավման նպատակով կենսատեխնոլոգիական արժեք ներկայացնող որոշ հիդրոլազների թիրախավորված կերպափոխում	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ	176000.0
18	24LCG-4A011	Պիպոյան Դավիթ Աշոտի	Սննդամթերքի ռիսկի և օգուտի գնահատման կարողությունների զարգացում Հայաստանում	ՀՀ ԳԱԱ «Եկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	153000.0
19	24LCG-1C026	Ռաֆայելյան Մուշեղ Սպարտակի	Օպտիկական ուսուցում վերակազմավորվող անալոգ ոչ-գծային ցանցերի վրա	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	176000.0
20	24LCG-1E008	Տեփանոսյան Գևորգ Հովհաննեսի	Լոռու մարզի հողերում հազվագյուտ հողային տարրերի համապարփակ երկրաքիմիական բնութագրում՝ կոմպոզիցիոն տվյալների վերլուծության և մեքենայական ուսուցման կիրառմամբ	ՀՀ ԳԱԱ «Եկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	153000.0
21	24LCG-1C022	Քոթանջյան Տիգրան Վիլիկի	Ֆոտոմիջուկային և պրոտոն-միջուկային փոխազդեցություններում բազմանեյտրոն համակարգերի առաքման հետազոտումը	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	175988.0